

ՄԱՅԻՍ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առաւօրեայ օրերէն)

Յայտարարութիւն ընդունւում է առանձին լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
Խրաքանչիւր ըստ 2 կոպեկի.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հողային ծրագիր.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Մամուլ. Ինչպէս կը փրկվէք. Նամակ Արաւ-
թումանից. Նամակ Խմբագրութեան. Ներքին
լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արաւթին
լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Յարան-
սիայից:

ՀՈՂԱՅԻՆ ՆԵՐՔԻՆ

Ներքին հեռագիրը հաղորդեց մեր երկրի
համար մի նշանաւոր լուր: Հրատարակված
է Բարձրագոյն ուկրա, որ որոշում է Ան-
գլիական արքայի արքայի արքայի հոգի
մի քան ընտանեկան պետական գիւղացիների
իրաւունքները:

Այդ ուկրա զորք ձեռն է ստանում մի
կարեւոր գործ, որ մշտական խորհրդածու-
թեան առարկայ էր դարձել մեր երկրի
իրաւունքեան համար, բայց որ դանա-
զան հանգամանքների պատճառով մինչեւ
այժմ չէր ստանում որոշ ձեւակերպու-
թիւն: Պէտք է շատ ցաւել, որ հողային
բարեկարգութեան ծրագիրը մշակված չէր
մի քան տասնեակ տարի սրանից առաջ,
երբ մեր երկրի ազգայնականութիւնը այնքան
խիտ չէր, որքան այժմ է հեղուկութեամբ
կարելի էր ազատ հողերի միջոցով ապա-
հովել այն գիւղացիներին, որոնք այժմ
սանձվում են սակաւահողութիւնից:

Այն եօթնասուն տարվայ ընթաց-
քում, որ մեր երկրի մեծագոյն մասը պը-
տանում է նոր քաղաքացիական կեանքի
պայմաններում, ինչ որոշված չէին մեր
գիւղերի հողային իրաւունքները և գիւ-
ղական համայնքի հողի սահմանները ըն-
դունված էին իբրեւ ժամանակաւոր գծեր,
որոնք կարող էին ենթարկվել և խախտու-
նէրէրէր: Բնական հողաբաժնիները
սահմանված չէին որ և է ընդհանուր
սկզբունքի հիման վրա, այլ գոյութիւն

ունէին բազմաթիւ մասնաւոր կարգադրու-
թիւնների և ծրագրերի հիման վրա:

Այժմ, երբ գիւղական ազգայնականու-
թիւնը սկսել է զգալ հողի պակասութիւն
և մի և նոյն ժամանակ զեռ չէ իւրացրել
կուլտուրական աւելի կատարեալ կարգեր
իր տնտեսութեան մէջ, շատ դժուար կը
լինի գոհացնել գիւղացիներին, որովհետեւ
չը կան աւելորդ հողեր, որոնցով կարելի
լինէր լրացնել նրանց հողի պակասորդը:
Այդ պատճառով նոր ծրագիրը իր իրա-
գործութեան համար պէտք է պահանջէ
ամենաուշագիւր վերաբերմունք և մանրա-
կրկիտ ուշադրանքներ, որպէս զի
կարելի լինի փոքր ի շատեւ աճող կերպով
լուծել դժուար և ծանրակշիւ հարցերը:

Այս տասնհինգ տարի է, որ սկսված է
Անգլիական պետական գիւղացիների ու-
սումնասիրութեան խնդիրը և կազմված
են զանազան շրջանների գիւղական հողե-
րի համար բարեկարգութեան մակարդակ-
ներ. սակայն այդ բոլոր կատարածք մի
անշնչան բան է այն մեծ գործի հետ, որ
պէտք է կատարվի այսուհետեւ: Գիւղա-
կան բոլոր հողերը պէտք է չափվեն և
զանազան դասակարգերի բաժանվեն յա-
տուկ յանձնաժողովների միջոցով: Հողա-
յին գործի վերջնական բարեկարգութեան
համար ամբողջ երկրում կը պահանջվեն
տասնեակ տարիներ: Բայց երկրի առանձին-
առանձին մասերում նա առաջ կը գնայ,
հէնց որ հետազոտութիւնը կորոշի աւելա-
կան տնտեսական բոլոր պայմանները:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

O tempora, o mores!... Ճիշդ չորս տարի ա-
ռաջ, 1896 թվականին—եւ ո՞վ չը գիտէ թէ
դա ինչ տարի էր—Վենետիկի «Բազմալէպ»
ամսագիրը մի շատ ազգայնական էր սակեւ
էջմիւսին անշուք աստուածաբանների հետ

ժողովուրդներին հիւսել բոկաչիական անթիւ-
զրոյցներ:

Դատարանը մեղաւոր ճանաչեց խոտուղա-
նութիւնը հրապարակ հանող կրօնաւորին և
200 ֆրանկի տուգանքի ենթարկեց: Այս է
փաստը, որ ինքն ըստ ինքեան իբրեւ կաթո-
լիկ կղերի կեանքից վերցրած մի երեւոյթ,
զարմանք չէ կարող յարուցանել. քանի որ Բօր-
չիաները վաղուց հետէ սովորեցրել են աշխար-
հին, թէ մինչեւ ուր կարող է հասնել երբեմն
մի կաթոլիկ կրօնաւորի անպատկառութիւնը:
Իսկ խոտուղանութիւնը ուրիշ յայտնելու և
այլ նման յանցանքներ ժպիտ կարող են յա-
րուցանել միայն. եղբիւրները վաղուց են հո-
գացել, որ Աստուծոյ պաշտօնակիր ձեռքով
կատարված նոյն իսկ ամենամեծ ոճիրները աշ-
խարհի սովորական գէպերի կարգի անցնեն:
Փաստը հետաքրքիր է դառնում միանգամայն
այլ պատճառով:

Ինչպէս որ սպասելի էր, այս գէպը իր բոլոր
մանրամասնութեամբ, նամակների պատճեննե-
րով, դատարանի արձանագրութեամբ հրատա-
րակվեց Պարիզի թերթերում և մի աւելորդ ան-
գամ առիթ տուեց հակակղերական մամուլին
արմատական միջոցներ պահանջել կրօնական
հաստատութիւնների, կարգերի, դատարա-
կութեան և առհասարակ կրօնական ոգու
դէմ, որ այժմ այնպէս ծանրացած է ֆը-
րանսական ժողովուրդական կրթութեան վրա:
Ի միջի այլոց ազատամիտ թերթերից մէկը
գտնում էր, որ հանրապետութիւնը իր սկզբ-
բունքի դէմ դաւաճանութիւն է գործում կր-
ոնական հաստատութիւններն ու կարգերը իր
օրէնքների հովանու տակ առնելով, և որ ա-
մենք աւելի հետաքրքրական է, յիշեալ թեր-
թը իր զայրոյթն էր յայտնում դատարանի դէմ,
որ խոտուղանութիւնը յայտնող հոգեւորական-
ներն զատապարտեց, որովհետեւ, ասում էր նա,

միաբնակութեան և երկաբնակութեան մա-
սին: Միեւնոյն հայրերը իրանց պաշտօնա-
կան առնադրի մէջ, դատապարտելով հայրին,
որ նրանք յաճախ կերպով միաբնակութեան
են կպած, մի ուն Շիրակացու բերանով ա-
սում էին. «Իսկ թէ նա (այսինքն հայոց եկե-
ղեցին) կղզիացած մնալովն՝ ինչ վաստակեցաւ
մինչեւ ցայսօր, և կամ ինչ պիտի վաստակի
ասկէց վերջ՝ արդեւնքն ոչ այլ ինչ է բայց ե-
թէ չարժեք զկասկած և առեւթիւնն այցոյց՝
առ ինքն» և և յետոյ նոյն «Բազմալէպ» աւե-
լանքում էր, որ Վենետիկը պատրաստ է «մի
բաւական դուռնար ևս յատկացնել այս դատիս
(այսինքն) միաբնակութեան և երկաբնակու-
թեան» քննութեան, յանձնաժողովի մի ձեռ-
քով: Այս կրօնական մոլեռանդութիւնը որտե-
ղին էր հասել «Մշակ» մի քանի կծու յոդ-
ածներով յարձակվեց անորոշ աստուածաբան-
ների վրա, պահանջելով, որ նրանք հրապարա-
կից հանեն այդ ամօթալի վէճը, որ զգուշաց
է պատճառում մանաւանդ մի այնպիսի պատմա-
կան րօպէին, ինչպէս էր 1896 թվականը: Պա-
տասխանելով մեր յարձակումներին, «Բազմա-
լէպ» ասում էր թէ «աւետարանի աշակերտ-
ները» չեն լսի մեզ. իսկ մենք դրա դէմ գրե-
ցինք. «Այս, կղերական նեղարտութեան, կր-
ոնական անհաշտութեան դարերի աւետարանը
գոցէ և ուրիշ բան թելադրէ: Բայց նա, այդ
աւետարանը վաղուց է փակված... Ազգերը
այժմ փակուստ են տալիս թշնամական յարա-
բերութիւնից, աշխարհի բարեբարներ չեն աշ-
քում Տօրկվեմագաները, այլ այնպիսի մեծ
մտքեր, որոնք եղբայրութեան, միութեան գա-
ղափար են քարոզում նոյն իսկ վայրենիների
մէջ, նոյն իսկ այնպիսի ազգերի մէջ, որոնք
ցեղային յատկութիւններով, իրանց ծագումով
ներկայացնում են դարաւոր, անհաշտ անդիմա-
ններ: Եւ թող ինքը գտնէ իր անունը այն կր-
ոնական հաստատութիւնը, որ երկպառակու-
թիւն, ատելութիւն է տարածում մի և նոյն
ցեղին, մի և նոյն արեւին և լեզուին պատ-
կանող ժողովուրդների մէջ»:

Այս բոլորը տեղի ունէր ընդամենը չորս
տարի առաջ: Այժմ նոյն «Բազմալէպ» մէջ,
պատժելով իր կոչման դէմ զանցառութիւն
գործած հոգեւորականին, դատարանը ամբա-
պնդում է եկեղեցին, ոյժ է տալիս կրօնական
կարգերին, կրօնական գեղեցկութեանը, և հե-
տեւաւէս նա պահանջում էր թողնել սուրբ
հայրերին հանգիստ շարունակել իրանց այն
յանցանքները, որոնք եկեղեցու հիմունքն են
քանդում. թող նրանք անպատիժ կերպով դա-
ւաճեն իրանց յանձն առած կրօնական ուխ-
տին, իրանց կոչմանը, որպէս զի կրօնական
ոգին ինչին ինչն իրան, իր իսկ ներկայացուցիչ-
ների ձեռքով, որ հոգեւոր կարգերի կազմա-
լուծումը առանց կողմնակի օժանդակ միջոց-
ների կատարվի:

Արդեօք արամաբանօրէն է դատում յիշեալ
հակակղերական թերթը այսպիսի պահանջներ
յայտնելով, այսպիսի ցանկութիւններ ձեւա-
կերպելով: Տարօրինակ չէ, որ եկեղեցու երդ-
ւան, համոզված թշնամին պահանջում է ան-
պատիժ թողնել նրա պաշտօնականներին, նրանց
յանցանքները գործելու ազատութիւն տալ: Ոչ,
կը պատասխանեք մենք, ոչ միայն տարօր-
նակ չէ, հազաւ է չափազանց տրամաբանա-
կան իր դաւանած սկզբունքների, իր ծայրա-
յեղ գաղափարների, իր ուղղութեան տեսա-
կէտից: Ամեն մի հաստատութեան, հասարա-
կական որոշ կարգերի անկումն այն ժամանակ
է կապարեալ և անդաւնալի, երբ դա կա-
տարվում է նոյն իսկ այդ հաստատութեան
ղեկավարներին, այդ կարգերի ներկայացուցիչ-
ների ձեռքով, երբ իրանք՝ օրէնքի ներկայա-
ցուցիչներն են ուսնաւոր տալիս օրէնքները,
պարտադրանքներ, անբարեխղճութեան պեր-
ճախօս օրինակներ տալիս: Պատմութիւնն ան-
թիւ ազդեցութիւն է տուել այդ ճշմարտութեան,
հանջի, ցանկութեան մէջ պարագայս ոչինչ
չը կայ:

այս տարվայ յունիսի համարում, խմբագրական
յօդուածը ասում է:

Երբ հինէն նոր հայութեան կանցնինք,
ծնունդ կանոնն կրօնական վէճը, խարու-
թիւնը և զօրեղ բանակութիւնը. կրօնական
փոքրիկ խնդիր մը մեծ խրամատ մը կը բա-
նայ հայութեան միջեւ և ծնունդ կանոնն
կաթոլիկի և լուսաւորչական հայ հասա-
րակութիւններ, ուսկից կը ծարձակին աւե-
տարանական և միտաւորական և այլ հայ փոք-
րակի հասարակութիւն մը: Եւ ամենն ալ
փոխադարձաբար զիրար կատեն ու կը հալա-
ծեն, թէ և ամենն ալ Հայ են և Հայկա
սանունը: Այդ համարին և համագործի ան-
շատ հայ հասարակութիւններէն, ոչ մին
զմիւսն կընդունի հարազատ Հայ, այլ ամեն
մին ինք զինքն միայն կանոնաւէ հայրե-
նեաց հաւատարմի որդի և Հայու մաքուր
արիւն: զայս խորթացած, ալլաւստած հա-
սարակութիւններ: Եւ այս խաւարածիտ դա-
ղափարները, մեր վերջնադարեան պատմու-
թեան մէջ, արեւոտ էջեր գրոշմած են—
Լուսաւորչական հայերն կատեն կաթոլիկի
հայ հասարակութիւնը, կարծելով զանոնք
հայ եկեղեցին անջատուած, փոխադարձա-
բար և կաթոլիկի հասարակութիւնն ալ
կատէ դուստուրչականը, ընդունելով դա-
նունք անհաւատարմ հայ սրբազան հայր
վարդապետութեանց. կաթոլիկիսպ կատեն
դուստուրչականս՝ վասն զի դեռ չեն մո-
ռացուած այն հալածանքները և կոտորած-
ները՝ զորս կրեցին մոլեռանդութենէ զրդեալ:
Վերջապէս կրօնքի վէճերը միշտ տաք և
բռնկած լինելով, փոխադարձ ատելութիւնը
արմատ դրաւ մեր հայ հասարակութեան մէջ,
և այս ատելութիւնը՝ այս երկու հասարա-
կութեանց միջեւ եղած փոքր խրամատը չա-
փազանց ընդարձակեց ու խորցուց. որ պի-
տի ամիոփուր և անհետանայ, թէք է հալա-
ծենք կրօնական վէճերն և ամեն տարան-
ջատ հայութիւն՝ իբրեւ հարազատ որդիք
հայրենեաց, միմեանց ձեռք տալով՝ գործեն
ազգին յառաջագիւղութեան համար:

Ինչպէս չը բացականչել. «O tempora, o mo-
res!»: Վենետիկի հոգեւոր տպարանը մօտ
երկու հարիւր տարի է ինչ հեղեղում է հայոց
աշխարհը գրեթեւ և այդ հրատարակութիւն-
ների մէջ համարեա ոչ մի յարմար առիթ չէ
անտես առնվում՝ քաղկեդոնեան հին դարմանը
քամելու, միաբնակութեան և երկաբնակու-

Փաստը հէնց այս պատճառով չափազանց
խրատական է դառնում նաեւ մեզ համար: Զի
որ տարիներ է ինչ եկեղեցական խնդիրները
քաջջլվում են մեր մամուլի մէջ առանց որ և
է դրական հետեւանքի. տարիներ է ինչ մե-
զանում եկեղեցու պաշտպանութիւնը կապա-
լով յանձն առած ամուլ գլուխներն տէր մեր
մի կարգ հրապարակաւսները կոկորդ են
պատուած ցին ժայթքելով դիւառակորդնե-
րի վրա ամեն անգամ, երբ վերջիններս հա-
մարձակվում են ցոյց տալ մի հոգեւոր եղբայրա-
յի մէջ տեղի ունեցող զեղծութիւնների անվերջ
շղթան:

«Ազգի և եկեղեցուց թշնամին է» ճշգրիտ
խաւար անկեղծութեամբ սարդերի պէս կծկված
հաղար ու մի մութ անձնաւորութիւններ, երբ
«Մշակ» առաջին անգամ հրապարակով ասաց
այնքան պարզ ճշմարտութիւնը, թէ՛ կաշառա-
կերութիւնը՝ ուր և ում ձեռքով էլ կատար-
վելու լինի, կորստաբեր յանցանք է, ծածկելը՝
փարիսեցութիւն է, որ տգիտութիւնը ոչ մի
հասարակական ասպարէզում, նոյն իսկ եկե-
ղեցում, տանելի չէ, մահացու չէ, որ կամայա-
կանութիւնները, ապօրինի գործողութիւնները
զայրոյթ են յարուցանում ուղղամիտ սրտե-
րում, վրդովեցնում են հասարակական խիղճը,
մահու չափ վասնդատու են այն հաստատու-
թիւնների համար, որոնք ասպարէզ են դար-
ձել այդպիսի տխուր երեւոյթների, որ անհրա-
ժեշտ է անողորմ ձեռքով կարգ, արգելադրու-
հաստատել անտէրութեան և կողոպուտի
մատնված ազգային այն թշուառ հիմնարկու-
թեան մէջ, որի անունն է հայոց եկեղեցի:

Եկեղեցու, ազգի թշնամի է «Մշակ», որ իր
մեծ հիմնադրի ուղղութեանը հաւատարմ, ազ-
նիւ յամառութեամբ պահանջում է մի փոքր
աւելի աջաբաց լինել, կամեաւոր կորուսթիւն
չը ձեւացնել, չը խաղալ ժողովրդի նուիրական

թեան մասին ճանաչող համար Եւ յանկարծ, այդքան երկար եւ այդքան բուռն գործունէութիւնից յետոյ, որ թէ լուսաւորական եւ թէ կաթօլիկ հայերին կատարեալ տիրացու դարձրեց, Վենետիկի պաշտօնական բերանը ստում է։

Կրօնական վէճերը շատ տեղ հայ լեզուն ու գրականութիւնը աճիւնի վերածեցին։ Ասիոյ կաթօլիկէ հայք՝ այն օրէն որ շատ քառն հայրաձայններ կրեցին իրենց արեւմտիկ եւ հայրենակից հայերէն, առեկոթիւնը ստիպեց նոյն իսկ լեզուով անջատուիլ այդ հայաձայն դասակարգէն եւ անհայ մեծ մասը մոռցան հայրենի բարբառը, եւ այլապես եղան. եւ այս ողբալի երկրութեան նշաններն դեռ կրեւերն Փոքր Ասիոյ եւ Պոստոյ հայ կաթօլիկէ հասարակութեանց մէջ։ Նոյն հայաձայններն՝ ստիպեց զանոնք, որ նաեւ անուամբ որոշուին իրենց եղբայրներէն. եւ այլ եւս անոնց նոր սերունդըն չեն կոչուիր Տիգրան, Վաղարշապ, Արշակ, Հովհաննէս, այլ Եթիէն, Հանրի, Անթուան, Անժելա։ Կրօնական վէճերը եւ մոլորաբանութիւնը մղեց զՄերենց ատանց ակնածելու գոչել թէ. «Արտաւոյ Հայաստանեայց եկեղեցւոյ չիք Հայութիւնը»։ Ո՛վ միջնադարեան գաղափար, ինչ էր իր որոյ դաւանանքը։ Կրօնական մոլորաբանութիւնն Մարկոս Աղաբէկեանի մը պէս լուսամբու (!) դրազէտ եւ մեծ (!) դատարարով մը՝ գաղափարակից ըլլաւ Մերենցի։ Կրօնական մոլորաբանութիւնը երկու Միսիթեան միաբանութիւններն ալ որոնք հայ գրականութեան հոգին կրնդունուին, արտաքսեց հայութիւնէ. սխալ ուղղութիւն...

Սխալ, այն, շատ սխալ ուղղութիւն. եւ դրա մէջ հաւասարապէս սեղանոր են երկու կողմի կղերականները, լուսաւորական եւ կաթօլիկ Ժողովուրդը միմեջ չունեն, նա միայն հետեւում էր, նա միայն այն էր անում, ինչ դուրս էր բերում կրօնական նեղման, միակողմանի կրթութիւնից։ Եկան լուսաւոր ժամանակներ, երբ աշխարհական դպրոցը լուսաւորեց մարդկան միտքը, կղերական աղջաւորովի դարձաւ պատկերը դրեց ամենքի առաջ—եւ կազմեց հայ մարդու երգը—«Եղբայր եմք»։ Նոյն իսկ այն ժամանակ, երբ այդ երգը դեռ նոր սկսել էր հնչել Բաֆօրի ափերում, կաթօլիկ կղերը շատաւում էր «Համագրգայ» ընկերութիւնը ներկայացնել թիւրք կառավարութեան իրեն ակադեմիական օջախ։ Բայց չը մոռնանք անցեալի, նոյն իսկ մօտիկ անցեալի մէջ, փաստերը չափազանց առատ են, չափազանց խաւար ու զղուելի։ Անցեալը անցել է. «Ժամանակները փոփոխական են», ասում է ուսուցիչ Սեւրաբեկ, որ գտնէ այժմ վանական օրդան «Բարձրակէպը» Ամէրիկայի գիւտ է անում, կրկնելով այն, ինչ «Մշակը» քարոզել է ամբողջ քաղաք դարձ Բայց առ այժմ այսքան։ Մնացածի մասին կը խօսենք վաղը։

զգացմունքների հետ, հասկանալ, որ Ժողովրդի պահանջները փոխված են, որ անհարկին է այլ եւս անասունների հօտի եւ մարդկային հօտի հովիւների մէջ խորութիւն չը դնել, որ պաշտօններ ու պատիւներ վաճառելը՝ սրբութիւնը հեցնել է նշանակում, որ ժամանակ է կարգ, կանոն, արդարութիւն հաստատել։

Եկեղեցու թշնամի է «Մշակը», որ պահանջում է ամենախիստ պատժի ենթարկել իր կաշման, իր մարդկային արժանաւորութեան դէմ յանցանք գործող հոգեւորականին, որ պահանջում է փակել եկեղեցու դռները այնպիսի սուր արարածների առաջ, որոնք վաղեմ են այնտեղ չանի, արժանի ծարաւով, որոնք անարգանք են մի կրօնական հաստատութեան, որոնք թունաւորում են իրանց չընչած միջոցները։

Եկեղեցու թշնամի է «Մշակը», որ խորհուրդ է տալիս Ժողովրդի օրէցը արժողութեան առաջն անելու, նրան մի արդար, չիտալի, օրինական ճանապարհ ցոյց տալու համար կարգաւորել հասի եւ չը հասի խնդիրները, անանական յարկերի տակ իշխող չարիքին մի սահման դնել, լսել օգնութիւն, դատ, արդարութիւն ազդարհող ծայրը, ինչքան եւ թոյլ լինի, որքան խուլ, մոռացված անկիւնից լսվելու լինի նա։

Վերջապէս եկեղեցու թշնամի է «Մշակը», որ կրկնում է անդադար, թէ ժամանակ է եկեղեցական կալուածներն ազատել յափշտակիչ ձեռքերից, որ եկեղեցական սեփականութիւնն էլ հասարակական է եւ ոչ անհատական, որ անհատական հաղարները տէր կուսակիցները ստուկում է զարթոյնում, որովհետեւ ամեն մի զիջված գուժար իր մեծ պատմութիւնն ունի։

Այն, այս բոլորն ասելով «Մշակը» ազդի, եկեղեցու թշնամի հռչակելը եւ—ինչ ապացուցել է—հռչակվում է դեռ, ուժ կողմից, —նրանց, որոնց համար պատմութիւնը փոխափայլութիւն

ԻնՉՊԻՍ ԿԻ ՓՐԿՎԻԲ

(Վամակ Գանձակից)

Հանգուցեալ Ե. Բուդաղեանը իր յայտնի կրթական մի շատ ազգու ու շատ խրատական դաս տուեց մեր այն հարուստներին, որոնք բարեգործութիւնը դեռ եւս չեն համարում իրեն եւ ինքն իրանց ունեցածից չարտում են մի չնչին մաս բարեգործական նպատակով, այդ էլ այն պատճառով, որ մահից յետոյ «տղորմի» տան նրանց ու մոռանան դէթ մասամբ այն բազմաթիւ «կամայ ու ակամայ գալթակողութիւնները, կատարված աստանայի գրգռման» («Նախաթ» նրան) մեղքերը, լափշտակութիւնները, մաքրագործութիւնները, բանդիտային անթիւ-անհամար սխալագործութիւնները, որոնց նորին նրանք օր ցերեկով, բացարձակապէս աշխարհ, դիզել ու դիզում են իրանց հարստութիւնը։ Տարին մի անգամ նրանք խոստովանում են իրանց այդ մեղքերը տէրտէրին, «մասամբ նորին»-ներ ասեղանում, «վայ ինձ, վայ ինձ» կրկնում ու «թողութիւն» աստանում եւ դարձեալ գնում թաւալկուտ այն տիղմի մէջ, որից բնանում, անձու ու զարգանում է միշտ նրանց մեղաւի կեանքի մեղաւի երջանկութիւնը...

Նախկին դրամաները հարկու հազարներ է դիզել, հարստացել է ինքը ու հարստացրել իր ազգականներին, կեղծ դրամի միջոցով «մօր ծիծ կտորը» իր ազնւաների թոռնիկ խմբերով ամբողջ գաւառներ է կողոպտել ըստիս բուն մեղքով, գնելով անգործացող հայ, թուրք ու լէզգի գիւղացիներից տաւար, ոչխար, տասնեակ հազարաւոր պուրկով, բուրդ, ցորեն, գարի եւ այլն ու յետոյ, վաճառելով այդ բոլորը, ձեռք է բերել իսկական դրամ «Վալը փողը» նա այդպիսով դարձրել է «խալիս ոսկի» ու անցաւ աշխարհի անցաւ երջանկութիւնը լիովին վաղեմու արտօնութիւն ստացել Գանձ-քանի տներ է քանդել նա, ինչքան արտասուք ու արին կայ խաղ ոսկու այն շողջողուն սիւնակների հետ, որոնք բնացրել ու անասնականից էլ ստորացրել են նրա խիղճը եւ որոնք այնպիսի անհուն բերկրութիւն են պատճառում նրա քարացած սրտին,—դրանց մասին նա ամենեւին չէ մտածում. խոցանարկելու ընդդառնութիւնը նա կորցրել է այն օրին, երբ կեղծ թղթագրամներ կապցնելը թղթագրած իր «բուրքի» աստառի տակ, դուրս է եկել այցելու հովիւ պէս չըջկու ու «միս-թարեւու խուլ ու խաւար գիւղերը, ոտով-գլխով անձնատուր լինելով փող դիզելու իր այդ յանցարար արեւստին։

Նրա բազմաթիւ գործեր, մի գեղեցիկ օր ի-մանալով, որ իրանց վաստակած դրամը, որը «այ-

լունի, այլ աշող ու անաշող դիպուածների մի պատահական չարք է, որոնց համար ժամանակը կանգ է առել, ստույգ քարացել, էփօ-լիւցիտ չունի, մարդկային միտքը անասնական ընաղդին է հաւասար։ Վատ թշուառականներ, որոնց գերագոյն առաքելութիւնը կայանում է կեղծիքները, սուտը, խաբէութիւնը, աւազան թիւթներ, վաճառք պաշտպանելու մէջ, իսկ գերագոյն ազգասիրութիւնը այն փարիսեցիական ուղանալների մէջ, որոնցով նրանք ամեն օր սողում են յանցագործների առաջ, թափանցիկ, մաշված մի կեղտոտ քող գցելով ստոր, դատապարտելի արարքների վրա։ Զայլով արամաբանութեան օծոված այդ գլուխները չարիքի առաջ աչք փակելով, կարծում են թէ իրանց չուրջ ամեն ինչ գեղեցիկ է։

Տարօրինակ չէ, ընթերցող, որ Ֆրանսիայում հակակղերական, հակաեկեղեցական մամուլը, որի համար եկեղեցին հասարակական կեանքի կանոնաւոր զարգացման յարտուժ սպառնալու է, որ հոգեւորականների մէջ տեսնում է միայն ոտող մտքի, բանականութեան թշնամիներ, որ աշխատում է ազատել Ֆրանսիան կրօնական հաստատութիւնների լծից, կրկնում եւ, այդ մամուլը դէպի կղերի յանցագործութիւնները նոյնպիսի լեզու է գործածում, որպիսին գործում են մեր եկեղեցու «պաշտպանները», մեր աւանդութիւնների լալկան զատագոյնները։ Սը-րանք են, որ պահանջում են լուրթիւն պահպանել այն բոլորի մասին, ինչ որ կատարվում է վանական պարիսպների մէջ, չը տեսնելու տալ հոգեւոր վարչութիւնների արարքները, հանգիստ սրտով դիտել անարժանիների շահատակութիւնները, լսել եկեղեցին դատարկապօրտ արկածախնդիրներով եւ թողնել, որ արանք չարութեան կողոպտուի, աւերածի քաղաքի գործը։ Պարզ չէ արդեօք, թէ ո՞վ է եկեղեցու իսկական թշնամին։

Գիւնք ինչպէս պետի վարվել եկեղեցու

ցելու հովիւը» այնպիսի առատութեամբ թափում էր նրանց գլխներին, կեղծ է, որ տարիների ընթացքում նրանց անտեսած բուրքը, ցորենը, գարին, սահաճ-փայլալայն տաւարն ու ոչխարը ոչ թէ ծախվել են, այլ ուղղակի յափշտակվել են նրանցից այնպիսի մարդու ձեռքով, որի հետ համեմատած Գեօ-օղլին, Ֆեարամը կամ Նարին տաւարին մարդիկ կարող են համարվել, սկսում են անմիա ու անօգուտ անէճքներ տեղալ իրանց կողոպտողի հասցէին։ «Իմ տունը քանդողի տունն էլ Աստուած քանդի»—բացալանջել է քանիցս անգամ անանկացած, թալանված, մերկացած ու քրքրված գիւղացին, բայց Աստուած չէ լսել նրա անէճքը։ Կողոպտողի անշուք կիսախարիտ տան տեղ ամենակարող ոսկու կախարչական ոյժով դեռնից դուրս է եկել մի ամբողջ պաղպայջ, շողողուն յատակներով, ոսկեզօծ առաստաղով, շաղկուչ կահ-կարասիքով ու դաշնամուրով, որի վրա նորին քնքոյունութիւնը, մեծապատիւ բանդիտի նաղելի դուստրը, իր հրաշալի մատներով անկրկ օրհներգներ է նուագում ի պատիւ իր «քաջութիւն» հայրիկի, այն «երանանի հերոսի», որը ամբողջ գաւառներ քանդեց նրա, ասանութեամբ աքանջելի արարածի, երջանկութեան համար...

«Երանելի հերոսի» կինն ու աղջիկները հափստում են միշտ վերջին մօտայով, այնպէս որ նոյն իսկ դժբախտները կարող են նախանձիկ ներանք. նրա օրգիքը առաջանկար հիւրանոցներում առաջնակարգ գինու չիւր եւս գատարկում, իսկ նա համարում է ոսկու շողջողուն սիւնակները ու զմայլում նրանցով Բայց հողեղէն մարդը չէ կարող յաւիտեան ոսկու սիւնակներով զմայլվել։ Վաղու-չա պէտք է անցաւ արշաւարդի հետ իր հաշիւները վերջացնել, հետեւաբար պէտք է ալ սկողմանալ դաւաճանքի, արժանաւորութեան հաշիւներով թողնել, եւ նա մահական անկողնից չարտում է մի աստուածահաճոյ գործի մի բուն իր անպարտաւոր, որ իր վերջին օրը «մի-մի լսելի ողորմի» ուղեկցութեամբ ինչի գերեզման... Նրա գերեզմանաքարի վրա նրա բերանից եւ նրա պատուէրով անշուշտ կը գրվի՝ «Ո՛վ անցաւ, ունայն աշխարհի ունայն փառքով ու բարիքներով մի գալթակովիք, քանիք նրանց մէջ միշտ խոսն է աստանայի մասը, նոյնպէս է մասնաւոր, պաշտելի է միմիայն ճշմարիտ Աստուած...» Խեղճ անցուորի ակունջին այդպիսի «գուռնա» փշող ու մամոնան չղովողը մոռանում է մի բան, այն, որ նա նստարական կարգով նախօրօք իր ոսկու կոյսերը կտակել է իր այլասեւովող, ծոյլ, անպէտք ու ձրիակեր սերունդին ու այդպիսով նրան մշտական անգործութեան ու ձրիակերութեան արտօնութիւն տուել...

Թշնամի «Մշակը».—Ճիշդ անպէտք, ինչպէս վարվում են Ֆրանսիայի հակակղերականները, ինչպէս վարվում են մեր եկեղեցու «պաշտպանները», այսինքն լուրթեան, չը տեսնելու պիտի տար այդ հաստատութեան չուրջ գործված անհամար գեղծութիւններ, որպէս զի անշուշտ աւելի խորը բացվէր, կործանուէր վերջնական լինելու իրաւունքութիւն է բաց անում հոգեւորականը—գաւառի լաւ եկեղեցու թշնամու համար, թող բոլոր խոստովանահայրերն այդպէս վարվեն, եւ ահա ինքն իրան կը ջնջվի խոստովանութիւնը, հոգիների դռները այդ կարող բանալին, որ կղերի ազդեցութեան անփոխարինելի գործակիցն է։ Ոչ ոք, որչափ եւ սղէտ, սահմանափակ գլուխ ունենայ, այնուհետեւ չի գնայ իր հոգու գաղտնիքները պատմելու մի սեւագեղատ մարդու, որպէս զի միւս օրը նոյն գաղտնիքները փողոցի սեփականութիւն դառնան։ Զը կայ խոստովանութիւն, չը կայ նաեւ հոգիների վրա իշխանութիւն—ահա մի մահացու հարուած եկեղեցուէն։

Վարդապետը կողոպտում է եկեղեցին.—աւելի լաւ եկեղեցու թշնամու համար իր սկզբունքների տեսակէտից, չէ որ կամաց-կամաց էլ ոչ ոք կօպէլ չի գցի այն գանձանակում, որով պիտի կառուցվեն սուրբ հօր ազգականները աները։

Եկեղեցական ծէսերը անպատիւ տակարկու-թեան առարկայ են դառնում—աւելի լաւ, ուրովհետեւ հետզհետեւ վաճառվող սրբութիւնն այլ եւս ոչ ոք չի գրաւի, եւ հոգեւոր դասը միայն զգուշանք չի բարոցանէ։

Ահա թէ ինչպէս կը վարվէր, եթէ եկեղեցու թշնամի լինէր «Մշակը» եւ ոչ այնպէս, ինչպէս վարվել է մինչեւ այժմ։ Եւ սա միանգամայն տրամաբանական կը լինէր, միանգամայն խելացի մի ընթացք ունեցող մի թերթի

Մեր վաղեմի ծանօթը, սեւահոգի վախառուն, որը իր գլխի մագերի թւի համեմատ աներ է քանդել-քարուքանդ արել, որը այրիներ ու որբեր է փողոցը չորտել, որի չնորհիւ շատ չեն օշխմաներ կրակներ են մարել, մահվան անկողնում մտաբերում է, որ նրա մէջ գոյութիւն ունի հոգի ասած բանը, որի «փրկութեան» մասին ժամանակ է մտածել, հակառակ դէպքում նրան հանգստութիւն չի լինի այն հետաւոր աշխարհում։ Նա եւս չարտում է մի բուն իր կողոպտած արեւմտեակ ոսկիները իր բարեգործի անուն վաստակած, իշխում իր յաւիտեական արախման տեղը։

Զօրան իր վէպերից միում, նկարագրելով բօրային վամպիրի գործունէութիւնը, որը միլիոններ է դիզում հարկաւոր մարդկանց անանկայան միջոցով, որի հետեւանքը լինում են ինքնասպանութիւններ, թունաւորումներ, խեղաբարութիւններ եւ այլն, այն միտքն է այտնում, որ անազնիւ միջոցներով հարստացած մարդը միայն մի բանով կարող է քաւել իր մեղքերը—վերագրանել կողոպտվածներին իր կողոպոււթը, այսինքն նուիրել իր հարստութիւնը հասարակական բարեգործութիւնն։

Նոյն կարող ենք ասել մեր հարուստների շատ շատերի մասին։ Նրանք եւս կարող են քաւել իրանց մեղքերը այդ միջոցով. դրանից դուրս թէ այս, թէ այն աշխարհում ճիշդ նրանց փրկութիւն... Թողնելով իրանց անհոգի հարստութիւնները միմիայն իրանց ժաւանդներին, նրանք իսկապէս փախնում ու ալլասեւում են նրանց, թէ բարոյապէս եւ թէ ֆիզիքապէս, քանի որ իրանց կտակով տալիս են նրանց մշտական անգործութեան, անպատակ թուեւ դառն, փափկակեցութեան, գեղխու-թեան, սօցիալական պարագիտի ու դուր տեղը գետին կիտ տուողի դիպած։ Նրանք իրանց կտակներով աւելացնում են կաֆէ-չաւատանային հերոսների թիւը, որոնք յաճախ անմահացնում են իրանց անունները զանազան Մարիւններում նրանով, որ «քէֆի լաւ վախտը» փչում են թանգազին հայկիները, կամ շամպանիայից պարտաստած վանաներում լուրջանում են առանձին կարեւորների հրապու-րիչ հերոսութիւններին, իրանց տարփութիւններին, որոնք վերջ ի վերջոյ նրանց «թամուզ» պղտու են ու «քաղցը» իշողութիւններով ծանրաբեւեռած բայ թողնում գէպի աշխարհիս չորս կողմերը։

Ստ. Տէր-Աւետիքեան

ՆԱՄԱԿ ԱՐԱՍԹՈՒՄԱՆԻՑ

Մայիսի 15-ին

Իրրեւ լուսնային կուրօրտ, Արասթումանը իր բուսական հարստութեամբ, թարմ եւ կու-

համար, ինչպէս միանգամայն տրամաբանօրէն է դատում Ֆրանսիական հակակղերական մամուլը պահանջելով թողնել, որ յանցանքները, գեղծութիւնները, օւխտադրութիւնները իրանք կրծեն կղերական դասի սրտը եւ օրէնքներով չը սրբել նրանց ախտերը, օգնու-թեան ձեռք չը մեկնել այդ կազմալուծվող տարրին։

Բայց «Մշակ»-ը այդ չարեց, նա մի ամբողջ սերունդ պատրաստեց, որ ոգեւորված ամենաազնիւ ձգտումներով, սողողված մաքուր յոյզերով, վշտացած նուիրական ցաւերով պատրաստ է ձգվել այդ հաստատութեան գիր-կը, պատրաստ էր իր գլուխը, իր սրտը, իր ամբողջ երիտասարդ կեանքը դնել այդ դարաւոր հիմնարկութեան բարոյական շահերի հա-մար եւ դրա փոխարէն պահանջում էր միայն բարեխղճութիւն, բարի կամք, իշտակութիւն, անկողնակալութիւն։ Իսկ դուք, եկեղեցու փարիսեցի բարեկամներ, դուք ինչ արեք. դուք ձեր կմախքի պաղ թաթերով յետ մեղեքից այդ ազնիւ հոսանքը, խլուրդի պէս փակեցիք ձեր բնի ամենազնիւն ծաղկոտները լոյսի ոչ մի չող ներս չը թողնելու համար եւ այնտեղ խաւարում փրկում էիք հողը, եւ լաւ էք ձեզ համար, շատ լաւ։ Ի՞նչու չը խոստովանել, յաղթանակ այդտեղ դուք տարաք, խաւարն ունէք, աղի-տութիւնն ունէք, մնում է միայն մոռացու-թիւնը. երբ այդ էլ ունենաք, ո՞վ կը լինի յան-ցաւորը—դուք, եւ միայն դուք, եկեղեցու կեղծաւոր պաշտպաններ։ Ֆրանսիայի հրապա-րականութիւն եկեղեցու բայց անպատիւ, աղի-տութիւն թշնամին է, այդ նրա համոզմունքն է, եւ նրա գործողութիւնները տրամաբանական ընթացք ունեն։ Իսկ դուք, հայ եկեղեցու ցած, անարգ, թշնամիներն էք, որովհետեւ ձեր թշնամութիւնը ծածկում էք «բարեկամ» անունն տակ։

Ա. Ահարոնեան

